

ԵՐԿՐԱՇԱՐԺ ՍԱՆ ՖՐԱՆՑԻՍԿՈՅՈՒՄ

Դեռ թարմ են 1988 թ. դեկտեմբերի 7-ի Հայաստանի ահեղ երկրաշարժի վերքերը, և հայ ժողովուրդը ամենից հստակ պատկերացրեց 1989 թ. հոկտեմբերի 17-ին Սան Ֆրանցիսկոյի երկրաշարժի հետևանքները: Անհամեմատելի են տարողությունները ու կործանարար հետևանքները երկու երկրաշարժերի, սակայն մարդկային վշտի խորությունը չափվում է աղետի փաստով: Եվ հայ ժողովուրդը զգաց այդ վշտի չափն ու հիշեց իր ծանր վշտի պահին առատաձեռնորեն կարկառած ամերիկացի ժողովրդի ձեռքը: Այդ վիշտը արձագանք գտավ նաև Մայր Աթոռում և Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրտում:

1989 թ. հոկտեմբերի 22-ին, հավարտ սուրբ պատարագի, Ս. Էջմիածնի Մայր տաճարում տեղի ունեցավ հանդիսավոր հոգեհանգիստ աղետի զոհերի հիշատակին՝ գլխավորությամբ Ամենայն Հայոց Վազգեն Ա Հայրապետի: Մայր տաճարն ու բակը հորդում էր բազմությամբ, որ եկել էր կիսելու ամերիկացի ժողովրդի վիշտը:

Վեհափառ Հայրապետը այս առթիվ խոսեց հետևյալ քարոզը.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ՝ ՍԱՆ ՖՐԱՆՑԻՍԿՈՅԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԱՌԻԹՈՎ

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Քրիստոս, Որդի Աստուծոյ, անոխակալ եւ բարեգութ, գթա քո արարչական սիրովդ ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց»:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, այս հուզիչ աղերսով է սկսում այն խորհրդավոր աղոթքը, որ կարդում ենք մենք ամեն հոգեհանգստյան արարողության առիթով: «Քրիստոս, Որդի Աստուծոյ, անոխակալ եւ բարեգութ, գթա քո արարչական սիրովդ ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց»:

Այժմ, կրկին հոգեհանգստյան պահ է սուրբ և անմահ պատարագի այս արարողության ընթացքում: Քահանայք և ժողովուրդ հավաքվել են ոգեկոչելու հիշատակը զոհյալների, որ կատարվեցին Ամերիկայի Միացյալ Նահանգների Սան Ֆրանցիսկոյում տեղի ունեցած աղետալի երկ-

ՍԱՆ ՖՐԱՆՑԻՍԿՈՅԻ ԱՀԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ
ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

բաշարժի առիթով ահա մոտավորապես մի շաբաթ առաջ: Ուժեղ, բավականին ուժեղ մի երկրաշարժ, որի հետևանքը եղավ ավելի քան հազար զոհյալներ, շենքերի, կամուրջների խորտակում, բազմաթիվ վիրավորներ և անհաշվելի նյութական վնասներ: Մի բնական աղետ, անսպասելի և իրապես խորապես ցավալի ոչ միայն ամերիկյան ժողովրդի համար, այլ նաև համայն աշխարհի համար, որովհետև մեր օրերին, մեր դարաշրջանում նման աղետյալներ ցավ են պատճառում ընդհանրապես բոլոր քաղաքակիրթ ժողովուրդներին: Մենք, իբրև Հայաստանյայց Եկեղեցվո առաջին սպասավոր, պարտք զգացինք բնականաբար ցավակցական հեռագիրներ ուղարկել՝ Միացյալ Նահանգաց պրեզիդենտ Ջորջ Բուշին, Կալիֆորնիո նահանգապետ Ջորջ Ֆեռքմեջյանին և Սան Ֆրանցիսկո քաղաքի քաղաքագլխին: Նաև մեր հոգևոր առաջնորդներին ի Լոս Անջելես և ի Նյու Յորք: Մեր ցավակցությունները ներկայացրինք մեր Եկեղեցու և համայն մեր ազգի Հայաստանի բնակչության անունով և մեր աղոթքը զոհյալների հոգիների հանգստյան և խաղաղության համար: Իսկ այժմ հանդիսավոր կերպով այս աղոթքի արարողությունը պետք է կատարենք, այսինքն հոգեհանգստյան պաշտոնը:

Սիրելի ժողովուրդ, ամերիկյան ժողովուրդը և հոգևորականությունը հայ ժողովրդի սրտում միշտ իրենց հատուկ տեղը ունեցել են պատմության ընթացքում, մանավանդ այն առիթներով, երբ Ամերիկայի Միացյալ Նահանգներից և պետական շրջանակներից և ամերիկյան ժողովրդից, ամերիկյան հոգևոր առաջնորդների ղեկավարությամբ միշտ ցուցաբերված է դեպի հայ ժողովուրդը ոչ միայն բարեկամական վերաբերմունք, այլ նաև սուգի և ցավակցության և օգնության: Հիշենք մանավանդ 1915-ի ցեղասպանության շրջանը, երբ մեր ազգը Արևմտյան Հայաստանում զոհ տվեց մոտ երկու միլիոն հայ ազգաբնակչության Օսմանյան կայսրության կողմից կազմակերպված այդ ահավոր կոտորածների օրերին 1915, 1916, մինչև 1917 թվականը: Ցեղասպանությունից հետո, սկսյալ մանավանդ 1918-ից և մինչև 1924, 1925 թվականները հայ ժողովուրդը վայելեց ամերիկյան ժողովրդի արտասովոր, սրտաբաց օժանդակությունը հատկապես հայ որբերին: Տասնյակ հազարավոր որբեր, որոնց ծնողները զոհվել էին ցեղասպանության շրջանին: Հարյուրավոր որբանոցներ կազմակերպեցին ամերիկյան միջոցներով և՛ արտասահմանում, և՛ Հայաստանում: Այդ որբանոցները գործեցին մինչև 1925 թվականը, մինչև որ որբերը մեծացան և կարողացան տարբեր աշխատանքների անցնել: Մենք երբեք չենք կարող մոռանալ ամերիկյան ժողովրդի այս գթասրտությունը և բացառիկ օժանդակությունը ուղղված մեր ազգին, իր տառապանքի և՛ ողբի, և՛ սուգի օրերին: Նաև անցյալ տարվա երկրաշարժից հետո, Լենինականի զարհուրելի երկրաշարժից հետո, երբ այնքան տասնյակ հազարավոր զոհեր տվեց մեր ազգը, հենց առաջին օրերից վայելեցինք նույնպես ամերիկյան ժողովրդի օժանդակությունը, հոգատարությունը: Այս բոլորը մենք երախտագիտությամբ պետք է հիշենք այսօր, երբ հենց ինքը՝ Ամերիկան էլ գտնվում է սուգի մեջ: Մասնակից ենք այդ սուգին և աղոթում ենք սրտանց, որ Աստված լուսավորի նրանց զոհերի հոգիները, շուտափույթ կերպով վերաշինվեն քանդված շենքերը և կամուրջը, և ամերիկյան ժողովուրդը հետ այսու երբեք չտեսնի նման դժբախտության պահեր:

Այսօր մեր աղոթքների մեջ պետք է հիշենք նաև նոր զոհեր, որոնց մասին ես երեկ լսեցի, Ուլյանովսկ քաղաքից ճամփա ելած մի մեծ օդա-

նավ, որ փոխադրում էր օգնություններ Լենինականի աղետյալներին, Լենինականի մոտ ինչ-ինչ պատճառներով՝ խորտակվել է օդի մեջ և զոհվել են տասը հոգիներ՝ անձնակազմը այդ օդանավին, ռուս ժողովուրդի զավակներ: Մենք հուզումով հիշում ենք նաև այս դժբախտ պատահարը, ցավում ենք կատարվածի համար և մեր հոգևոր պարտականություններ ենք նկատում աղոթել նաև նրանց հոգիների համար և մեր ցավակցությունը ներկայացնել նրանց հարազատներին, ազգակիրներին:

Այս պահին հիշում եմ նաև այն պատահարը, որ տեղի ունեցավ երկրաշարժից քիչ հետո մի ինքնաթիռ, որ օգնություն էր բերում Հարավսլավիայից, հենց Էջմիածին քաղաքի մոտ օդանավը կրկին ինչ-որ պատահարով խորտակվեց, և զոհվեցին յոթ հարավսլավացի անձնակազմի մարդիկ: Նրանց հարազատները շուրջ երկու ամիս առաջ հրավիրված էին մեր կառավարության կողմից, և նրանք այցելեցին նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածին, եղան ինձ մոտ: Եկել էին ոմանց կիները, ոմանց մայրերը կամ զավակները: Շատ հուզիչ պահեր ապրեցինք և մեր աղոթքը և ցավակցությունը ներկայացրինք հարավսլավացի զոհվածների հարազատներին: Այսպես ընթացան մեր օրերը վերջին մեկ և կես տարվա ընթացքում, աղետները մեկը մյուսի հետևից վրա հասան, և մենք նաև այսօր խոր հուզական, պարտք ենք համարում հիշել բոլոր զոհվածներին:

Թող Աստված լուսավոր պահի նրանց հիշատակը: Մենք քրիստոնյա ենք և հավատում ենք, որ այս կյանքից հետո սպասում է մեզ նաև այլ կյանք: Այդ հավատքով, այդ քրիստոնեական հույսով առաքում ենք մեր աղերսը առ Աստված, որպեսզի Տերը քաղցրությամբ ընդունի Սան Ֆրանցիսկոյի և զոհված սավառնակի անձնակազմի հոգիները, խաղաղություն պարգևի և մխիթարություն նրանց հարազատներին:

Մաղթենք նաև, որ Աստված անփորձ պահի մեզ բոլորիս նման արհավիրքներից, նման աղետներից:

Մենք նման առիթներով մեր հույսը դնում ենք Աստուծո վրա, և այդ հույսով, այդ մխիթարությամբ դիմում ենք դեպի կյանք և դեպի նոր լուսաբացներ:

Սիրելի ժողովուրդ, այժմ հրավիրում ենք ձեզ, մեզ հետ միասին աղոթել ննջեցյալների հոգիների համար:

«Քրիստոս, Որդի Աստուծոյ, անոխակալ և բարեգութ, գթա քո արարչական սիրովդ ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց»: